

**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՈՒ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՄԿԲՏՉՅԱՆ Ն. Ն.

Démokratía (de'mos kra'tos) - հին հունարեն այս երեք բառերը արդի համաշխարհային քաղաքագիտական մտքի, հասարակական շարժումների, քաղաքական գործընթացների և տեխնոլոգիաների, քաղաքական առաջնորդների, քաղաքական առաջնահերթությունների, միջազգային կազմակերպությունների՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, արդար և արդյունավետ կառավարման անհրաժեշտության և պահանջների կարևոր բաղադրիչն են:

«Ժողովրդավարություն» հասկացության ծագման և ձևավորման պատմական ուղին երկար է եղել, բազմաբնույթ և հակասական: Դեռևս սկզբնավորման ժամանակներից ակնհայտ էր, որ ժողովրդավարությունը բարդ և բազմակողմ երևույթ է: Այդ իսկ պատճառով անհնար է «ժողովրդավարություն» հասկացությունը հետազոտել՝ հենվելով միայն դրա քաղաքագիտական նշանակության վրա: «Ժողովրդավարությունը» այն քաղաքագիտական հասկացությունն է, որի կարևոր բաղադրիչը գործնական քաղաքականության մեջ նրա ձևերը բերած արդյունքներն են և հետևանքները: Ժողովրդավարության քաղաքագիտական հետազոտությունը դեռ չի ավարտվել: Նորացող աշխարհի և նոր քաղաքական գործընթացների հետ այն ձևեր է բերում նոր նշանակություն ու ազդեցություն, կրում է որոշակի էվոլյուցիոն փոփոխություններ: Նաև այդ պատճառով է, որ «ժողովրդավարություն» հասկացության ամփոփ և վերջնական սահմանում դեռ գոյություն չունի: Ըստ այդմ՝ այդ հասկացության հետազոտման համար անհրաժեշտ է վեր հանել նրա պատմական զարգացումը, պատմական և քաղաքական որոշակի իրողությունները, քաղաքական իրականությունից դեպի կատարելության հասնելու ձգտումները և ուղիները:

Ժողովրդավարությունն ինքնին ժողովրդավարական արժեքների ու ազատությունների և սկզբունքների, ժողովրդի միջոցով պետական իշխանության ձևավորման, պետական արդար կառավարման արդյունավետ ձևերի և ուղիների որոնումների, կառավարման համակարգի և կառավարիչների՝ իշխանության գործունեությունը հասարակության կողմից վերահսկելու, քաղաքացիների իրավահավասարության, մարդու հիմնարար իրավունքների ապահովման և պաշտպանության կառույցների, ժողովրդավարական սկզբունքներով պետության կառավարման ուղիների, մեթոդոլոգիայի և տեխնոլոգիաների ամբողջությունն է: Միաժամանակ, այդ ինդիքները ոչ միայն եղել են ժողովրդավարության նախնական պատկերացումների և սկզբնավորման հիմքում, այլև հենց դրանց շուրջ էլ ծավալվել է հիմնական քաղաքագիտական և քաղաքական բանավեճը՝ դառ-

նալով քաղաքական օրակարգի հիմնական «թեժ կետերից» մեկը: Այդ խնդիրներով էր պայմանավորված քաղաքագիտական մի շարք դրպրոցների և հոսանքների, հասարակական-քաղաքական շարժումների ձևավորումը և զարգացումը:

Ընդամին, քաղաքական տարաբնույթ գործընթացներն աշխարհում կամ տվյալ պետությունում առաջ են քաշում ոչ միայն ժողովրդավարական ազատությունների հռչակման, այլև դրանց հետեվելու, հավատարիմ մնալու և դրանց գործնական կիրառական նշանակությունը մեծացնելու պահանջներ:

De'mos kra'tos-ի՝ ժողովրդի իշխանությունը հաստատելու նախնական պատկերացումները, փնտրտուքները իրենց նախնական ձևակերպումներն են ստացել դեռևս անտիկ աշխարհում: Հունական պոլիսների արդյունավետ կառավարման որոնումները հին հույն մտածողների շրջանում սկզբնավորեցին փիլիսոփայական տարբեր ուղղություններ, որոնք, հաջորդ դարերում վերափոխվելով և զարգանալով, քաղաքագիտական նոր հոսանքների և ուղղությունների ձևավորման կարևոր ազդակ դարձան:

Մ.թ.ա. V-IV դարերում Աթենական պետության մեջ ժողովրդավարական կառավարումը ձևավորվում և կայանում էր թե՛ գործնական քաղաքականության մեջ, թե՛ տեսական աշխատություններում: Ձևավորվելով Սոլոնի կառավարման ժամանակահատվածում՝ ժողովրդավարությունը վերելք ապրեց Պերիկլեսի օրոք:

Ժողովրդավարության նախնական ձևակերպումները ի հայտ եկան հին հունական փիլիսոփա Դեմոկրիտի (մ.թ.ա. 460-370) հասարակագիտական, փիլիսոփայական հայացքներում: Պետական արդյունավետ կառավարման խնդիրները Դեմոկրիտը քննարկել է դեռևս մ.թ.ա. V դարում. «Պետական գործերը պետք է համարել ամենագլխավորը, քան մնացյալ գործերը: Յուրաքանչյուրը պետք է ձգտի, որ պետությունը լինի բարեկեցիկ: Քանի որ պետությունը, որն ընթանում է ուղիղ ճանապարհով, հզոր հենարան է: Եվ այստեղ է ամփոփված ամենը. եթե պետությունը բարեկեցիկ է և ապահով, ապա ապահով և բարեկեցիկ են բոլորը, եթե պետությունը մահանա, կրմահանան բոլորը»¹: Այնուհետև՝ «Ժողովրդավարական պետության մեջ աղքատությունը պետք է գերադասելի լինի միապետության մեջ ապրած երջանիկ կյանքից այնպես, ինչպես ազատությունն է գերադասելի ստրկությունից»²:

Ծոմոկրատիա-ի՝ ժողովրդավարության առաջին առավել ամբողջական, թեպետ դեռ նախնական ձևակերպումներն ի հայտ են գալիս Հին Հունաստանի մեծ մտածող, փիլիսոփա Արիստոտելի (մ.թ.ա. 384-322) փիլիսոփայական, քաղաքագիտական աշխատություններում: Ուսանելով հույն փիլիսոփա Պլատոն Աթենացու (մ.թ.ա. 428-347) ակադեմիայում՝ Արիստոտելը հետագա աշխատություններում ներկայացնում է իր գիտական քննադատական հիմնավորումները Պլատոնի «իդեալական պետության» շուրջ: Իր «Պետություն» երկ-

¹ Лурье С. Я., Демокрит. Тексты, Л., 1970, с. 195.

² Նույն տեղում:

խոսության մեջ Պլատոնը լրջորեն կասկածի տակ էր դնում ժողովրդավարության անհրաժեշտությունը՝ այն հակադրելով իդեալական արիստոկրատական պետությանը, որտեղ կառավարում են «փիլիսոփաները», իսկ պաշտպանում են «պահապանները»՝ «զինվորները»: Փիլիսոփաները և պահապանները համարվում են պետության «ազատ քաղաքացիները», որոնցից ներքև են «արհեստավորները»: Պլատոնի հասարակագիտական ընկալումների մեջ ժողովրդավարությունը ներկայացվում է որպես երկրի պաշտպանունակության խոչընդոտ³:

Աթենական հասարակական, փիլիսոփայական միտքը առաջադիմական աշխարհընկալում և ձևակերպումներ է ձեռք բերում «հին աշխարհի մեծ մտածողի» (Մարքս)՝ Արիստոտելի աշխատություններում: «Պոլիտիկայում» նա քննարկում է պետական կառավարման տարբեր համակարգերը, ներկայացնում դրանց առավելություններն ու թերությունները: Ժողովրդավարական կառավարումը նա քննարկում է նախևառաջ իր երկրի՝ Աթենական պետության համար: Արիստոտելի առաջ քաշած գաղափարները, դրանց գիտական ձևակերպումները, կիրառական առանձնահատկությունները պահպանել են իրենց արդիականությունը: Այս հանգամանքը ոչ միայն վկայում է Արիստոտելի քաղաքագիտական ընկալումների հստակության, այլև ժողովրդավարության կենսունակության մասին:

«Ժողովրդավարական իրավունքների առանցքն այն է, որ հավասարությունն իրականացվի ոչ թե ըստ արժանիքների, այլ քանակային առումով: Եթե խոսում ենք արդարության մասին, նշանակում է, որ գերագույն իշխանությունը պատկանում է ժողովրդական զանգվածներին: Եվ մեծամասնության որոշումները արդարացի են ու վերջնական»⁴: «Գոյություն ունի պետական կառուցվածքի հիմնական երկու տեսակ՝ դեմոկրատիան և օլիգարխիան, այնպես, ինչպես գոյություն ունի հիմնականում երկու տեսակ քամի՝ հյուսիսային և հարավային, մյուսներն այդ երկուսի տարատեսակներն են»⁵: «Պոլիտիկայում» Արիստոտելն առաջ է քաշում նաև ժամանակակից քաղաքագիտության մեջ հայտնի «միջին խավի» անհրաժեշտության խնդիրը. «Պետությունը, որը կազմված է միջին մարդկանցից, ունի լավագույն պետական կառուցվածք: Այդ պետությունն առավել ապահով է և անվտանգ, քանի որ այն դեպքերում, երբ մի մասն ունի չափից շատ կարողություն, մյուսները ոչինչ չունեն, առաջանում է կամ ծայրահեղ դեմոկրատիա, կամ օլիգարխիա՝ մաքուր տեսքով, կամ տիրանիա՝ որպես ծայրահեղության մյուս տեսակ»⁶:

Հետագա պատմական տարբեր ժամանակահատվածներում, մասնավորապես՝ XIV-XVII դարերի եվրոպական լուսավորական շարժման խոշոր ներկայացուցիչների առաջադիմական հայացքների և

³ Փիլիսոփայական բարարան, Ե., 1975, էջ 345:

⁴ Аристотель, Сочинения, т. 4, М., 1983, с. 571.

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 508:

գաղափարների, հոսանքների և ուղղությունների ձևավորման, ծավալման վրա մեծ է հին հունական ժողովրդավարության մեծ մտածողների և Աթենական պետության ժողովրդավար կառավարիչների ազդեցությունը:

Հարկ է նաև նկատել, որ աթենական ժողովրդավարությունն իր կայացման ճանապարհին հանդիպում էր լուրջ խոչընդոտների և տարաձայնությունների տեղիք տալիս: Բնավ դյուրին չի եղել աթենական ժողովրդավարության կայացումը. հասարակագիտական, քաղաքագիտական, փիլիսոփայական մտքի կայացումը ևս ընթացել է դիմակայությամբ: Այս ընթացքը անտիկ փիլիսոփայական ուսմունքների լուրջ գիտակ Վ. Պ. Գորանը ամփոփել է այսպես. «Վաղ հունական փիլիսոփայությունը ծնվել և զարգացում է ապրել ոչ թե միայն պարզապես աթենական ժողովրդավարության առկայության պարզ հանգամանքի հետևանքով, այլև նրա շնորհիվ, որ ժողովրդավարության կայացումը Աթենական պետության մեջ ուղեկցվում էր արիստոկրատիայի և դեմոկրատիայի շուրջ աշխարհայացքային կողմնորոշումների սուր բախումների շնորհիվ»⁷: Հենց այս աշխարհայացքային բախումների երևույթն էլ հետագա դարերում ստացավ իր քաղաքագիտական ձևակերպումը՝ «քաղաքական բանավեճ», որն ուղեկցել է Աթենական պետությանը իր սկզբնավորումից մինչև փլուզումը:

Մ.թ.ա. 411 թ. Աթենական պետության մեջ տեղի ունեցած օլիգարխիկ հեղաշրջումը սկիզբ դրեց երկրի քաղաքական անկայունությանը և ժողովրդավարական կառավարման աստիճանական փլուզմանը:

Հին հունական մտածողների և կառավարիչների գաղափարաբանական մի շարք սկզբունքներ տարածվեցին նաև հին աշխարհի մեկ այլ պետության մեջ՝ Հռոմեական կայսրությունում, որտեղ մ.թ.ա. 510-ին Հռոմի վերջին թագավոր Լուկիոս Տարքվինիոս Գոռոզի վտարումից հետո հաստատվեցին հանրապետական կարգեր: Սկսեցին կառավարել կոնսուլները: Երկրում բարձրագույն իշխանությունը պատկանում էր Ժողովրդական ժողովին, գործում էր նաև Սենատը՝ ձերականույտը: Վաղ հանրապետական շրջանի պատմության մեջ կարևոր դեր է ունեցել պլեբեյների պայքարը պատրիկների դեմ՝ քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու համար, որի շնորհիվ պլեբեյներն իրավունք են ստացել ընտրելու իրենց իրավունքները պաշտպանող ժողովրդական տրիբուններ (մ.թ.ա. 494): Պայքարը գլխավորում էին Գրակքոս եղբայրները⁸:

Յուրացնելով Աթենական պետության մեջ քաղաքացիական իրավունքների սկզբունքները՝ Հին Հռոմում դրանք սկսեցին ավելի խոր զարգացում ապրել: Հռոմեական պետության մեջ սկսեց ձևավորվել իրավունքի առավել զարգացած համակարգը, որը պատմության մեջ հայտնի է որպես «հռոմեական իրավունք»: Հռոմում իրավունքը

⁷ Горан В. П., *Генетическая связь философии и демократии в Древней Греции (Гуманитарные науки в Сибири, 1998, N 1, с. 18)*.

⁸ *Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Ե., 1980, հ. 6, էջ 598:*

բաժանել են երկու մասի՝ հանրային իրավունք (jus publicum) և մասնավոր իրավունք (jus privatum): Հանրային իրավունքը կարգավորում էր ընդհանուր, մասնավոր իրավունքը՝ անհատների մեջ ձևավորվող իրավահարաբերությունները: Հանրային իրավունքի նորմերը (պետաիրավական, քրեաիրավական), Հռոմեական պետության անկմամբ կորցնելով իրենց նշանակությունը, դադարեցին գործելուց: Մասնավոր իրավունքը, որով սկզբնավորվեցին անձի իրավական և տնտեսական ինքնորոշման հիմքերը (օրինակ՝ քաղաքացիական պաշտպանությունում անձանց իրավահավասարության սկզբունքը), ոչ միայն գործեց Հռոմեական կայսրությունում, այլև փոխառվեց Արևմտյան Եվրոպայում՝ կազմելով քաղաքացիական իրավունքի հիմքը: Քաղաքացիական իրավունքի հիմնական հասկացություններն ու ինստիտուտները՝ սեփականության իրավունքը, պարտավորական իրավունքը, ժառանգական իրավունքը, այժմ էլ ժամանակակից մի շարք պետությունների քաղաքացիական օրենսդրության անկյունաքարն են: Դրանք ձևավորվել են ստրկատիրական Հռոմում⁹: Հռոմից ժառանգություն են մնացել իրավունակություն, իրավաբանական անձ, վաղեմություն, քաղաքացիություն և այլ կարևոր հասկացությունները: Հռոմական պետության իրավունքի մոդելը հետագայում որդեգրեց նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները:

Մ.թ.ա. II դարում Հռոմեական պետությունում սկսվում է հանրապետական կարգերի քայքայման գործընթացը:

Այստեղ հարկ է ընդգծել, որ

- անտիկ աշխարհում Աթենական պետությունը դարձավ քաղաքացիական իրավունքների, ժողովրդավարական ազատությունների քաղաքական և քաղաքագիտական կենտրոն, որտեղից էլ սկսեցին տարածվել իրավունքների և ազատությունների առաջադիմական գաղափարները՝ հատելով պետությունների սահմանները.

- Աթենական պետության մեջ ժողովրդավարական կառավարման ձևավորումը, կայացումը և զարգացումը հնարավոր դարձան ժողովրդավարական համակարգի և պետական կառավարման արդյունավետ ձևերի ու մեթոդների տենդագին որոնումների, հին հունական փիլիսոփաների ծավալուն տեսությունների մշակման, «ազատ քաղաքացիների» ընտրելու իրավունքի ապահովման և պաշտպանության շնորհիվ: Այս և այլ հանգամանքներն էլ կենսունակություն հաղորդեցին պետական կառավարմանը: Եվ թեպետ Աթենական պետությունը փլուզվեց, սակայն նրա մեծ մտածողների հայտնաբերած և ձևակերպած ժողովրդավարական արժեքները առաջադեմ մարդկության մեծագույն նվաճումներից են:

Աթենական պետության անկումից հետո «2000 տարի շարունակ «ժողովրդավարություն» եզրույթն անհետացավ եվրոպական քաղաքական բառապաշարից և եթե օգտագործվեց էլ, ապա միայն բացասական շեշտադրմամբ՝ «արիստոտելյան» ձևակերպումը նույնացավ

⁹ Նույն տեղում, էջ 610:

ի սկզբանե սխալ, աղավաղված, այլակերպված կառավարման ձևի հետ, ինչը սասանում է պետության հիմքերը»¹⁰:

Եվրոպայում միապետական կարգերի հաստատումից որոշ ժամանակ անց, եվրոպական մի շարք պետություններում միապետի իրավասությունների սահմանափակումների անհրաժեշտության շուրջ դատողությունները սկսեցին ավելի ու ավելի որոշակիանալ՝ ուղեկցելով միապետությանը նրա կառավարման ողջ ժամանակահատվածում: Քրիստոնեական Եվրոպայում առաջադեմ մտածողների շրջանում ժողովրդավարության արժեքների ընկալումները բխում էին հենց քրիստոնեական սկզբունքներից, այն է՝ Աստված ստեղծել է մարդուն իր պատկերով և նմանությամբ, ուստիև բոլորը հավասար են Աստծո առաջ: Դեռևս միջին դարերում Եվրոպայում պնդում էին, որ միապետն իր իշխանությամբ պետք է ծառայի ժողովրդին և չպետք է խախտի Աստծու օրենքները՝ պատվիրանները:

Իտալիայում XIV դարում Վերածննդի ժամանակաշրջանի սկիզբը դրվեց, որի ստեղծած մշակութային, հասարակագիտական և փիլիսոփայական արժեքները, որպես մարդկության մեծագույն նվաճումներ, ճանապարհի հարթեցին առաջադիմության համար: Վերածնունդն իր անվանումը ստացավ պատմական անտիկ ժամանակաշրջանի հումանիստական մշակույթը և արժեքները վերածնելու, վերաիմաստավորելու համար: Վերածննդի գաղափարախոսության և արժեքային համակարգի կենտրոնում մարդն էր ու մարդկայինը¹¹:

Մարդակենտրոն գաղափարախոսությունը սկիզբ դրեց հումանիստական քաղաքական ուղղության: Մարդն ընկալվում և ներկայացվում էր որպես «տիեզերքի կենտրոն»: Բյուզանդիայից Իտալիա վտարանդված գիտնականները թարգմանեցին ողջ անտիկ գրականությունը՝ վերածնելով, վերաարժեքավորելով հին հունական փիլիսոփաների գաղափարները: Վերածննդի գաղափարախոսությունը XV դ. վերջին և XVI դ. սկզբին տարածվեց Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրներում, որտեղ իտալական Վերածնունդը որոշակի փոփոխություններ կրեց՝ ձեռք բերելով նոր առանձնահատկություններ: Սակայն Եվրոպայում բողոքականության հաղթանակի հետևանքով Վերածննդի գաղափարախոսությունը սկսեց նահանջ արձանագրել. Վերածննդի հումանիզմը հայտնվեց ճգնաժամի մեջ: Միաժամանակ, Վերածննդի գաղափարներն ու արժեքները չանհետացան: Դրանց ժառանգորդը շարունակեց մնալ Եվրոպան: Արևմտյան Եվրոպայում ֆեոդալական կարգերի քայքայման և կապիտալիզմի սկզբնավորման հետ մեկտեղ եվրոպական մի շարք երկրներում սկսեցին ձևավորվել նոր գաղափարական հոսանքներ և ուղղություններ, որոնք էլ, իրենց հերթին, նոր հասարակական, քաղաքական իրողությունների առաջացման հիմք և պատճառ դարձան:

Անգլիայում 1256 թ. ձևավորվեց աշխարհում առաջին խորհրդարանը (պառլամենտ), որն իր դասական քաղաքագիտական և քաղա-

¹⁰ Пугачев В. П., *Политология*, М., 1999, с. 249.

¹¹ Նույն տեղում, էջ 385:

քական նշանակությունը ձեռք բերեց միայն անգլիական բուրժուական հեղափոխությունից հետո՝ XVII դարում¹²: Որպես ներկայացուցչական բարձրագույն մարմին՝ խորհրդարանը դարձավ ժողովրդավարության անկյունաքարը՝ դնելով խորհրդարանական հիմքերն աշխարհում:

Անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկը (1632-1704) պառլամենտական միապետության կողմնակից էր: «Պետության կառավարման մասին երկու տրակտատների» հեղինակ Լոկն առաջ էր քաշում պետության մեջ «հասարակական դաշինքի» հաստատման գաղափարը: Պետությունը, ըստ Լոկի, պարտավոր է պայմաններ ստեղծել սեփականության պահպանման, անձի դաստիարակության և զարգացման համար: Պետությունը հասարակական դաշինքի կողմերից մեկն է և եթե չի իրականացնում իր պարտականությունները, ապա ազատ քաղաքացիներն իրավունք ունեն տապալելու այն: Լոկի փիլիսոփայական, քաղաքագիտական հայացքների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում ազատության և հավասարության գաղափարը. «Մարդիկ ի ծնե ազատ են, հավասար և անկախ»¹³:

Անհատի ազատության սկզբունքները դրվեցին արևմտյան ազատական գաղափարախոսության՝ լիբերալիզմի հիմքում: Ջ. Լոկը վաղ լիբերալիզմի ներկայացուցիչն է: Նրա գաղափարաբանական մի շարք սկզբունքներ հետագայում դրվեցին նոր ձևավորված Միացյալ Նահանգների Անկախության հռչակագրի և սահմանադրության հիմքերում:

Անգլիայում XVII դ. ձևավորվեց առաջին քաղաքական կազմակերպությունը՝ վիգերի կուսակցությունը, որի գաղափարախոսության և ծրագրերի հիմքում ևս Լոկի քաղաքագիտական ուսմունքն էր: Հետագայում, միավորվելով այլ քաղաքական ուժերի հետ, ժամանակ առ ժամանակ գալով իշխանության, վիգերը վերակազմավորվեցին որպես Մեծ Բրիտանիայի լիբերալ կուսակցություն¹⁴: Անգլիան իր պետական կառավարման համակարգի մի շարք կարևոր հատկանիշներով դարձավ լիբերալիզմի հայրենիքը: Ձևավորվում էր նոր քաղաքական հոսանք՝ ազատական ժողովրդավարությունը՝ լիբերալ-դեմոկրատիան:

Եվրոպան դարձավ առաջադիմական գաղափարների հասարակական, քաղաքական և մշակութային կենտրոն: Հոլանդիայում, Անգլիայում, Ֆրանսիայում XVII-XVIII դդ. սկսեց ձևավորվել լուսավորական շարժումը: Գերմանացի փիլիսոփա Իմանուել Կանտը (1724-1804) «Պատասխան հարցին. ի՞նչ է լուսավորականությունը» հոդվածում (1784 թ.) ներկայացնում է եվրոպական այդ նոր հոսանքի էությունը, խնդիրներն ու նպատակները: Դրանք հանգում էին հասարակության վերափոխմանը՝ հասարակական զարգացման մեջ զգալի տեղ հատկացնելով բանականությանը: Լուսավորական ժա-

¹² *Современный политологический словарь*, М., 2000, с. 612.

¹³ **Расел Б.**, *История западной философии*, М., 1959, с. 12-15.

¹⁴ *Современный политологический словарь*, с. 448-450.

մանակաշրջանը հետագայում ստացավ նաև «բանականության դար» ձևակերպումը¹⁵:

Լուսավորիչներն առաջ քաշեցին ժողովրդավարական ազատությունների ապահովման խնդիրները՝ կարևորելով մարդու քաղաքական ազատությունների ապահովման անհրաժեշտության և մարդկանց հավասարության գաղափարները, որոնց հաղթանակի դեպքում կստեղծվի նոր հասարակարգ: Նրանք սկզբնավորեցին մարդկանց «բնական իրավունքի» տեսությունը, համաձայն որի՝ բոլոր մարդիկ հավասար են: Լուսավորիչները ձգտում էին վերափոխել հասարակական բարքերը, հաղթահարել հասարակական արատները: Լուսավորիչները դարձան եվրոպական բուրժուական հեղափոխությունների իրականացման գաղափարախոսները:

Ազատության արժեքային համակարգը դառնում է հասարակության և պետության կենսունակության պարտադիր պայման: «Ազատության իմաստն այն է, որ կախում ունենաս միայն օրենքներից»¹⁶: Ֆրանսիացի լուսավորիչ Վոլտերի (1694-1778) այս ձևակերպումը հետագայում դարձավ իրավական պետության գաղափարախոսական հիմքը: Ընդամիս, Վոլտերն ընդգծում էր. «Օրենքների մեծաքանակությունը պետության մեջ նույնն է, ինչ մեծ թվով բժիշկների առկայությունը. այն հիվանդության և անուժության ախտանիշ է»¹⁷: Լուսավորական հայացքների և հասարակական գործունեության համար 1726 թ. արտաքսվելով Անգլիա՝ Վոլտերն իր «Փիլիսոփայական տետրակներում» (1733) վերհանում է անգլիական հասարակական, քաղաքական համակարգի առավելությունները՝ ֆրանսիականի նկատմամբ, երկիր, որտեղ իշխում էր բացարձակ միապետությունը:

Ֆրանսիացի մեծ մտածող և լուսավորչական շարժման ազդեցիկ ներկայացուցիչներից Ժան-ժակ Ռուսոն (1712-1778), որի հասարակական, փիլիսոփայական հայացքների վրա մեծ է Լոկի ազդեցությունը, շարունակելով ազատության խնդրի արծարծումը, ընդգծում է. «Ազատությունը չի տեղավորվում և ոչ մի կառավարման ձևում, այն յուրաքանչյուր ազատ մարդու սրտում է»¹⁸: Ժ. Ռուսոն ժողովրդավարության գաղափարախոսն է: Նա նույնպես «հասարակական դաշինքի» ջատագով էր: «Հասարակական դաշինքի մասին» աշխատության մեջ Ռուսոն առաջ է քաշում ժողովրդավարական պետության մեջ երկրի ակտիվ քաղաքացու գաղափարը, այն քաղաքացու, որն օտարված չէ պետությունից և «ընդհանուր հասարակական օրգանիզմի» սկզբնաղբյուր է համարվում: Ռուսոյի գաղափարները հետագայում դրվեցին 1791 թ. ֆրանսիական սահմանադրության հիմքում:

¹⁵ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Ե., 1978, հ. 4, էջ 690:

¹⁶ Փիլիսոփայական բառարան, Ե., 1975, էջ 383:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, էջ 360:

Ֆրանսիացի մեկ այլ մեծ մտածող, գրող, փիլիսոփա Դենի Դիդրոն (1713-1784), Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա Երկրորդի հրավերով ժամանելով և գրեթե մեկ տարի բնակվելով այնտեղ, փորձում է համոզել նրան անցկացնել լիբերալ բարեփոխումներ: Դիդրոն եղել է ֆրանսիական բուրժուական հեղափոխության գաղափարախոսներից: Նրա համոզմամբ՝ «Ոչ ոք բնությունից իրավունք չի ստացել կարգադրելու ուրիշներին»¹⁹:

Անհատի ազատության, լիբերալիզմի, լիբերալ տնտեսության գաղափարները հետագայում իրենց ամբողջական խտացումը ստացան շոտլանդացի երկու փիլիսոփաների, տնտեսագետների Դեյվիդ Հյումի (1711-1776) և Ադամ Սմիթի (1723-1790) քաղաքական և տնտեսական գաղափարաբանության մեջ, ըստ որի՝ պետության դերը տնտեսության մեջ պետք է հասցնել նվազագույնի, և մարդիկ պետք է գործեն ազատ, առանց սահմանափակումների, ազատական շուկայի և ազատ մրցակցության պայմաններում:

Ձևավորվելով Արևմտյան Եվրոպայում՝ ազատության և լուսավորականության գաղափարները տարածվեցին Ռուսաստանում, որտեղ ծայր էր առել պայքարը ճորտատիրական իրավունքի և ֆեոդալական կարգերի դեմ: Ռուս մտածողներից Ալեքսանդր Ռադիշչևը (1749-1802) առաջ էր քաշում ժողովրդավարական հանրապետության ստեղծման, բոլոր քաղաքացիների հավասար իրավունքների գաղափարը: Իր «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» (1790) երկում Ռադիշչևը մերժում է Ռուսաստանը բարեփոխելու հիմնադրույթը՝ պաշտպանելով ինքնակալությունը տապալելու ժողովրդի հեղափոխական իրավունքը:

Ռուսաստանում դեկաբրիստների հասարակական-քաղաքական շարժումը ևս մեծապես կրում էր արևմտաեվրոպական քաղաքական մտքի ազդեցությունը: Ռուսաստանում XIX դ. ձևավորված և ծավալված նոր քաղաքական ուղղության, հեղափոխական-դեմոկրատների՝ Գերցենի, Օգարյովի, Չերնիշևսկու հայացքների և գործունեության վրա մեծ էր հենց Ա. Ռադիշչևի ազդեցությունը²⁰:

Ամփոփելով հարկ է բնդգծել, որ՝

- ժողովրդավարական արժեքների և ազատությունների շուրջ եվրոպական մտածողների, լուսավորիչների մոտեցումները, ձևակերպումները, գաղափարները դրվեցին XVIII-XIX դդ. համաշխարհային հասարակական, քաղաքական մի շարք ազդեցիկ հոսանքների հիմքում:

- XX դարի համաշխարհային քաղաքագիտական մտքի կողմից ձևակերպված և քաղաքական գործընթացներում անընդմեջ շրջանառվող «եվրոպական արժեհամակարգ» հասկացության հիմնարար սկզբունքները դրվեցին միջազգային ազդեցիկ կազմակերպությունների, եվրոպական քաղաքական կառույցների գործունեության և պահանջների հիմքում:

¹⁹ Пугачев В. П., *նշվ. աշխ.*, էջ 256:

²⁰ Նույն տեղում, էջ 267:

- Եվրոպական արժեհամակարգի սկզբնաղբյուրը ժամանակի եվրոպացի մեծ հումանիստներն են, եվրոպական քաղաքական, հասարակագիտական մտքի կրողները: Հետադիմության, ինքնակալության դեմ մղվող պայքարում նրանց առաջադիմական հայացքներն ու սկզբունքները հաղթեցին աշխարհի տարբեր մայրցամաքներում:

- Աթենական պետության անկումից հետո համաշխարհային քաղաքական պատմության մեջ Եվրոպան դարձավ ժողովրդավարության հաջորդ կենտրոնը, որի առաջադիմական գաղափարները և ժողովրդավարական ազատությունների համար մղվող պայքարը տարածվեցին այլ երկրներում:

Ժողովրդավարությունը ձևավորվեց, կայացավ և զարգացավ որպես արևմտյան արժեքային համակարգ, որպես եվրոպական հումանիզմի դրսևորում, որպես եվրոպական քաղաքակրթության տարբերակիչ առանձնահատկություն:

ТЕНДЕНЦИИ И ПУТИ ФОРМИРОВАНИЯ И СТАНОВЛЕНИЯ ДЕМОКРАТИИ

МКРТЧЯН Н. О.

Резюме

Исторический путь к формированию и становлению демократии был долгим и противоречивым. Demos kratos – совокупность представлений об установлении власти народа – свою первоначальную формулировку получил еще в античном мире – в поисках путей эффективного управления греческими полисами. Еще в V-IV вв. до н. э. Афинское государство стало центром политических и политологических свобод, откуда и началось распространение прогрессивных идей. XVI-XVII вв. вошли в историю как эпоха Просвещения, ратовавшая за демократические свободы. Великие гуманисты – представители эпохи Просвещения – являлись носителями идей европейской общественной мысли, и Европа стала следующим центром демократии.